ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» հունվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-02/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Վարդան Մկրտչյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Վարդան Մկրտչյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ Վարդան Մկրտչյանին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 30.11.2016թ. թիվ 01/04.1/4359-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է Ա/Ձ Վարդան Մկրտչյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (29.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Մասնակցի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ա/Ձ Վարդան Մկրտչյանը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 13.12.2016թ. թիվ 28-38-1841 և «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 08.12.2016թ. թիվ 16/268/1 գրությունների համաձայն՝ վերջիններիս կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՇՁԲ-15/3-7», «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/12» և «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/13» ծածկագրերով գնման ընթացակարգերին Ա/Ձ Վարդան Մկրտչյանը մասնակցության հայտեր է ներկայացրել համապատասխանաբար 10.11.2015թ., 16.12.2015թ. և 14.01.2016թ.:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

(այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Ա/Ձ Վարդան Մկրտչյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 25.11.2015թ. թիվ 01/04.1/3390-15 գրությամբ դիմել է Ա/Ձ Վարդան Մկրտչյանին, որին ի պատասխան Մասնակիցը հայտնել է, որ 30.11.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չի ունեցել, իսկ համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ 2012թ. IV եռամսյակի համար՝ 65 000 ՀՀ դրամ, 2013թ. համար՝ 1 442 676 ՀՀ դրամ, 2015թ. (I-III եռամսյակ) համար՝ 3 706 967 ՀՀ դրամ, իսկ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ընդամենը՝ 6 657 021 ՀՀ դրամ:

Ա/Ձ Վարդան Մկրտչյանը, պատշաճ ծանուցված լինելով 13.01.2017թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-02/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.11.2015թ. թիվ 18-2/[978511]-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ցուցանակների տպագրության ձեռքբերման նպատակով 30.10.2015թ. կայացած «ՀՀՖՆ-ՇՀԱՇՁԲ-15/3-4.1» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 11.11.2015թ. թիվ 4 որոշմամբ Ա/Ձ Վարդան Մկրտչյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է, հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման մասին եզրակացությունը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 13.01.2017թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-02/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-02/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Վարդան Մկրտչյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀՖՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-4.1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Վարդան Մկրտչյանը 29.10.2015թ. հայտ է ներկայացրել:

2. Մասնակիցը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

3. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր արժեքը կազմել է ***3 744 000 ՀՀ դրամ:***

4. ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.11.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ***2 950 054 ՀՀ դրամ:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.11.2015թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով մերժել է Մասնակցի հայտը:

6. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.11.2016թ. թիվ 01/04.1/4359-16 գրությամբ արձանագրել է Ա/Ձ Վարդան Մկրտչյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով խախտումը թույլ տալու պահից (29.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Մասնակցի կողմից հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Մասնակցին Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.12.2016թ. թիվ 28-38-1841 գրությամբ ՀՀ ազգային վիճակագրության ծառայությունը հայտնել է, որ Ա/Ձ Վարդան Մկրտչյանը ***10.11.2015թ.*** հայտ է ներկայացրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՇՁԲ-15/3-7» ծածկագրով գնման ընթացակարգին:

8. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.12.2016թ. թիվ 16/268-1 գրությամբ ՀՀ ԿԳՆ «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ Ա/Ձ Վարդան Մկրտչյանը ***16.12.2015թ. և 14.01.2016թ.*** մասնակցության հայտեր է ներկայացրել ՀՀ ԿԳՆ «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/12» և «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/13» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Մասնակցին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-02/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15, 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրությունները, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության 13.12.2016թ. թիվ 28-38-1841, ՀՀ ԿԳՆ «Գավառի

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 08.12.2016թ. թիվ 16/268-1 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն *(հղումը կատարված է մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը)* հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ա/Ձ Վարդան Մկրտչյանը ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀՖՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-4.1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 29.10.2015թ. ներկայացված մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է ***գնային առաջարկ, որի ընդհանուր արժեքը կազմել է 3 744 000 ՀՀ դրամ***:

Մասնակիցը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.11.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 2 950 054 ՀՀ դրամ:***

Կենտրոնը արձանագրում է, որ Ա/Ձ Վարդան Մկրտչյանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀՖՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-4.1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 29.10.2015թ. ներկայացված հայտի թիվ 3.3 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Մասնակիցը նշված հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ գնային առաջարկից, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ***2 950 054 ՀՀ դրամ***, այն պայմաններում, երբ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է ***3 744 000 ՀՀ դրամ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Վարդան Մկրտչյանին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված

ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Մասնակիցը հայտնել է, որ համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ 2012թ. IV եռամսյակի համար՝ 65 000 ՀՀ դրամ, 2013թ. համար՝ 1 442 676 ՀՀ դրամ, 2015թ. (I-III եռամսյակ) համար՝ 3 706 967 ՀՀ դրամ (հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ընդամենը՝ 6 657 021 ՀՀ դրամ), մինչդեռ Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հայտը ներկայացնելուն ***նախորդող երեք հաշվետու տարիների*** համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի գնային առաջարկից, հետևաբար հաշվի առնելով, որ Մասնակիցը հայտը ներկայացրել է 2015թ., ուստի տվյալ դեպքում հաշվարկման ենթակա են Մասնակցի 2012թ., 2013թ. և 2014թ. համախառն եկամտի հանրագումարը, որի մեջ չի կարող ներառվել 2015թ. համախառն եկամտի հանրագումարը:

Կենտրոնը արձանագրում է, որ Ա/Ձ Վարդան Մկրտչյանի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***29.10.2015թ.*** հայտ է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀՖՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-4.1» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, որից հետո, համաձայն ՀՀ ազգային վիճակագրության ծառայության 13.12.2016թ. թիվ 28-38-1841 գրության, Ա/Ձ Վարդան Մկրտչյանը ***10.11.2015թ.***մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՇՁԲ-15/3-7» ծածկագրով գնման ընթացակարգին:

ՀՀ ԿԳՆ «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 08.12.2016թ. թիվ 16/268-1 գրության համաձայն՝ Ա/Ձ Վարդան Մկրտչյանը 16.12.2015թ. և 14.01.2016թ. մասնակցության հայտեր է ներկայացրել ՀՀ ԿԳՆ «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/12» և «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/13» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման

վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ***որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Հիմք ընդունելով վերոգրյալը, Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է 20.11.2015թ. թիվ 1/73-1/36125-15 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28053-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Վարդան Մկրտչյանին (ՀՎՀՀ՝ 25301142) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-02/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան